տեն դեռ չկային գրեթէ 'ի Թուրքիա հրդեհի դէմ ապահովագրական ընկերութիւնք։ Այրեցաւ նաև տեղւոյն Ս. Ստեփանոս Եկեղեցին՝ իր հագուստիւ զարդերովն սպասներով ու եկամուտներով։

1846ին՝ մեծ հրդեհ 'ի Ֆիլիպէ, ուր այրեցան 600 խանութ։

1846ին՝ 'ի Զմիւռնա, ուր այրեցան 100 խանութ։ Նոյն տարին դարձեալ 'ի Զմիւռնա երկրաշարժ մը կործանեց շատ խաներ։

Դարձեալ 1846ին՝ Մէնէմէնի մէջ հրդեհ մը այրեց շուկան և պէզէսթէնը։ Պերկամայի մէջ այրեցան բոլոր շուկան պանդոկներ և այլն։

Դարձեալ նոյն տարին Ադրիանուպոլիս այրեցան 1000 խանութ և երկու պանդոկ, ու Սելանիկ 2000 տուն և շատ խանութ։

Մեծ հրդեհ 'ի Կ. Պոլիս 1848ին՝ Եէմիշ իսկէլէէն մինչև Սիւլէյմանիյէ ու մինչև Եէնի ճամի։ Նոյն տարին դարձեալ Էյրի Դարու և Բերա։

1851ին՝ Խարդալ գիւղն այրեցաւ գրեթէ բոլորովին։

1851ին՝ Սկիւտար այրեցան բովանդակ շուկան, շատ տուներ, բաղանիք և մզկիթներ։

1852ին՝ Սամաթիա, այրեցան 1000 տուն Հայոց և 100 խանութ։

Հրդեհ մեծ Պրուսայի մէջ՝ 1854ին. այս հրդեհէն միայն Հայերը վնասեցին 130000 ոսկի։

1855ին՝ երկրաշարժ ահագին Պրուսայի մէջ, ուր կործանեցան շատ շէնք՝ մզկիթ, դամբարան, շուկաներ ու պանդոկներ, և փլատակաց մէջէն հուր ելնելով՝ այրեց 3000 տուն և ա՛յլ շէնքեր. 2000է աւելի անձինք մնացին փլատակաց տակ և վնասն հաշուեցաւ 500,000 ոսկի։

1855ին՝ այրեցաւ գրեթէ բոլորովին Գատըգիւղ։